
**ՀԱՅԵՐԵՆԻՑ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ**

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ա. Մ.

Մենք է հայկական սփյուռքի և Հայաստանի հայագիտական կենտրոնների դերը գրատպության և հայագիտության զարգացման գործում: Հայկական համայնքներ ստեղծվել են աշխարհի տարբեր մասերում, սակայն ժամանակակից հայկական սփյուռքը կազմավորվել է հիմնականում XX դարում: Հայ ժողովրդի տարագրման և հայ համայնքների ձևավորման պատմության միջոցով կարելի է բնութագրել թարգմանական գրականության պատկերը: Հայ-ֆրանսիական թարգմանական գրականությունն ունի դարավոր պատմություն: Լինելով Ֆրանսիայի բոլոր անկյուններում՝ հայերը մշտապես ձգտել են տպագրության միջոցով հաղորդակցվել ժողովրդի լայն զանգվածների հետ, ստեղծել հասարակական կարծիք, խոսք ասել հայ ազգի մասին, գրել ժողովրդի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային պատմությունը: Հայագիտությունը լայն զարգացում է ապրել Ֆրանսիայի համալսարաններում: XVIII դ. վերջերին Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցում հայոց լեզու է դասավանդել լեզվաբան, գիտնական Շահան Ջրպետյանը: Նրա սաներից էր ականավոր արևելագետ Անտուան Ժան Սեն-Մարտենը, որը մեծ գործ է կատարել հայոց լեզվի հետազոտման բնագավառում, հատկապես 1818-1819 թթ. Փարիզում հրատարակած «Հիշատակագիրը Հայաստանի մասին» և ֆրանսերեն այլ աշխատություններով: 1822 թ. նա Փարիզում հիմնադրում է «Journal Asiatique» արևելագիտական հանդեսը, որն իր էջերում պարբերաբար հոդվածներ է տպագրել հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի մասին: 1840-1850-ական թվականներին արևելագիտական մասնագիտական հանդեսներն ավելի հաճախ են անդրադառնում հին Հայաստանի պատմությանն ու հոգևոր կյանքին, միաժամանակ մեծանում է հետաքրքրությունը հայկական սկզբնաղբյուրների նկատմամբ: Ասպարեզ են գալիս մարդիկ, որոնք ամբողջովին նվիրվում են հայագիտությանը: Դրանցից առավել բեղմնավոր գործունեություն են ծավալել Ֆլորիվարը (Պոլ Էմիլ Լը Վայյան), Էդուարդ Դյուլոնը, Մարի Ֆելիստե Բրոսսեն, Վիկտոր Լանգլուան և ուրիշներ: Ուսումնասիրելով միջնադարյան հայ պատմությունը, գրականությունը, աստվածաբանությունը, արվեստն ու ազգային ծեսերը՝ նրանք իրենց պարտքն են համարել հանդես գալ հատուկ ուսումնասիրություններով: Փարիզի Մուրադյան վարժարանում հիմնովին սովորելով գրաբարը՝ ուսումնասիրել են հայ հին մատենագրությունը, մեր ժողովրդի պատմությունը: Նրանք հաճախ են ճանապարհորդել Հայաստանում, հավաքել նյութեր, ծանոթացել հին ձեռագրերին ու իրենց եզրակացությունները հրատարակել «Journal Asiatique», «Revue de deux mondes» և այլ պարբերականներում՝ գիտական աշխարհում մեծ հետաքրքրություն առաջացնելով Արևելքի ժողովուրդների, մասնավորապես հայերի ու նրանց դարավոր մշակույթի նկատմամբ: Այսպես, Ֆլորիվարը

թարգմանել և հրատարակել է Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունը», Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը», այս երկու մատենագիրների մասին գրել ընդարձակ հետազոտություններ: Է. Դյուլորիեն (ծնվ. 1807 թ.) հմուտ էր գրաբարի իմացության մեջ և սիրով ու նվիրվածությամբ ընթերցանակել է հայերեն շատ ձեռագրեր: Հասկանալով հայ միջնադարյան ձեռագրերի անվերապահ գիտական արժեքը՝ նա ջանում էր հնարավորինս շատ ձեռագրեր ունենալ ձեռքի տակ: 1850-1859 թթ. Փարիզում հրատարակել է Միքայել Ասորու, Մատթեոս Ուռհայեցու երկերի ֆրանսերեն թարգմանությունները, «Հետազոտություն հայկական ժամանակագրության» աշխատությունը և այլ գրքեր: Բավական ծավալուն հրատարակություն է «Հավաքումն խաչակրաց պատմյաց» ժողովածուն: Է. Դյուլորիեն հետաքրքրվել է նաև հայ ժողովրդական երգերով ու ավանդույթներով, լույս ընծայել «Ուսումնասիրություն հին Հայաստանի պատմական երգոց և ժողովրդական ավանդության» վերնագրով մի գիրք:

Կարևոր դեր է կատարել նաև Մարի Ֆելիստե Բրոսսեն (ծնվ. 1802 թ.) հայ պատմիչների բնագրերը, որն ուսումնասիրել է հին ձեռագրերը, ծանոթացել հնություններին, գրել իր տպավորությունները, հատուկ գրքույկներ հրատարակել Էջմիածնի վանքի, Անիի ավերակների, առանձին ձեռագրերի մասին: Նա բեղմնավոր աշխատանք է կատարել հայ հին մատենագիրների թարգմանության և գիտական հրատարակությունների առումով: Նրա թարգմանությամբ Փարիզում լույս են տեսել Կիրակոս Գանձակեցու, Թովմա Արծրունու, Սամուել Անեցու և այլ պատմագիրների երկերն ամբողջությամբ կամ հատվածներով: Վիկտոր Լանգլուան (ծնվ. 1829 թ.), լինելով Սեն-Մարտենի աշակերտը, նույնպես ունի հին Հայաստանի հոգևոր մշակույթին վերաբերող թարգմանական մի շարք հրատարակություններ: Նա, 1852-1853 թթ. գիտական ուղևորություն է կատարել Կիլիկիայում, հավաքել հին արձանագրություններ: Վերադառնալով Փարիզ՝ 1854 թ., հրատարակել է իր տեղեկագիրը, իսկ 1861 թ. տպագրել է ընդարձակ հոդված՝ «Ուղևորություն Կիլիկիայում և Տավրոսյան լեռներում» վերնագրով: Նա հետաքրքրվում էր նաև դրամագիտության հարցերով և հրատարակել է «Դրամագիտություն Հայաստանի միջին դարու» (Փարիզ, 1852), «Ընդհանուր դրամագիտություն Հայաստանի» (Փարիզ, 1858) գրքերը: Նրա գիտական հետազոտություններից է նաև նշանավոր Հեթում Պատմիչի աշխատության ֆրանսերեն թարգմանությունը: Վիկտոր Լանգլուան հատուկ ուսումնասիրություն է նվիրել Մովսես Խորենացուն, նրա «Հայոց պատմությանը»՝ համոզված, որ հետագա հայագետները նրան կկոչեն մեծ պատմիչ: Թարգմանել է XI դ. ականառու պետական գործիչ Գրիգոր Մագիստրոսի 83 թղթերի համառոտ բնագրերը՝ կցելով համապատասխան գիտական հետազոտություն: Նրա հայագիտական աշխատություններից են Սմբատ Գունդստաբլի ժամանակագրության և Միքայել Ասորու պատմական բնագրերի ֆրանսերեն թարգմանությունները և դրանց գիտական մեկնաբանությունները, ինչպես նաև V դ. հայ պատմիչների գործերի թարգմանու-

թյունը՝ երկու ստվար հատորներով և համապատասխան գիտական բացատրություններով¹:

Հայ թարգմանչական գրականության զարգացման ու տարածման համար նպաստավոր էին նաև 1920-30-ական թվականները: Սա այն ժամանակաշրջանն է, երբ արևմտահայ մտավորականների մի մասը Կոնստանդնուպոլսից տեղափոխվել էր Փարիզ: Նրանք մտածում էին ստացած գիտելիքները ծառայեցնել հայ հասարակական-քաղաքական կյանքի բարելավմանը: Փարիզի հայկական համայնքում մեծ հեղինակություն ունեւ բանաստեղծ, գրող, թարգմանիչ և խմբագիր՝ Արշակ Չոպանյանը, որը հայ տպագրությունը հարստացրեց բազմաթիվ թարգմանություններով, չափածո և արձակ ստեղծագործություններով: Իր գեղարվեստական գործերով, ուսումնասիրություններով, քննադատական հոդվածներով, հրապարակախոսական ելույթներով նա հանդես էր գալիս արևելահայ և արևմտահայ պարբերականներում: Բարեկամական լայն կապեր է հաստատում Էմիլ Զոլայի, Անատոլ Ֆրանսի, Ժորժ Կլեմանսոյի և այլ նշանավոր գրողների հետ, ինքնուրույն թարգմանական գործեր հրապարակում ֆրանսիական մամուլում: Ճանաչված լինելով որպես հայ գրականության դեսպանը Ֆրանսիայում՝ Արշակ Չոպանյանը ձեռք է բերում ոչ միայն իր հայրենակիցների, այլև ժամանակի առավել հայտնի ֆրանսիացի գրողների և քաղաքական գործիչների հարգանքը: Նպատակ ունենալով ֆրանսիացիներին ներկայացնել հայ ժողովրդի գրական և մշակութային ժառանգության լավագույն նմուշները՝ նա ֆրանսիական գրական ամսագրերում պարբերաբար տպագրում է հայկական ժողովրդական հեքիաթների թարգմանությունները, կազմակերպում մշակութային միջոցառումներ, հայոց պատմության ու գրականության վերաբերյալ սեմինարներ ու գիտաժողովներ: Բացառիկ է Չոպանյանի դերը հայ գրականությունը Եվրոպային, առաջին հերթին, ֆրանսիացիներին ծանոթացնելու գործում: Նրա թարգմանությամբ ֆրանսերեն լույս են տեսել միջնադարյան հայ տաղերգուներից մինչև X դ. բանաստեղծների ստեղծագործությունները: Հայկական սփյուռքը Ֆրանսիայում տարիների ընթացքում ավելի է մեծանում, բացվում են նոր դպրոցներ, եկեղեցիներ, տպագրվում են հայերեն և ֆրանսերեն թերթեր, որոնց շնորհիվ ավելի հաճախակի են դառնում հայերենից ֆրանսերեն ծավալուն թարգմանությունները: Ուշագրավ է, որ մեծ քանակի ստեղծագործություններ ֆրանսերեն են թարգմանվել նաև Սիրիայում, Թուրքիայում, Լիբանանում և այլուր: Ըստ Ֆրանսիայում գտնվող ACAM հայկական ասոցիացիայի, որն արտացոլում է արևմտահայերեն բնագրերից ֆրանսերեն թարգմանված ստեղծագործությունները, դրանց հեղինակները Մերձավոր Արևելքի երկրներում ապրող թարգմանիչներ են, որոնք գրքերը թարգմանում և հրատարակում են Ֆրանսիայում: Տարիների ընթացքում թարգմանական տպագրության դերը ոչ միայն չի նվազել, այլև մեծացել ու կենսական նշանակություն է ստացել: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայերենից ֆրանսերեն թարգմանությունների և դրանց տարածման գործին ակտիվորեն նպաստել ու նպաստում են հայ հա-

¹ Լեո, Երկերի ժողովածու, հ. 5, Ե., 1986, էջ 4:

մայնքի անդամները: Ֆրանսիական Գալլիմար «Gallimard», «La Pensée Universelle», «Editions de la différence», «L'Harmattan» և «Editions de la Cert» հրատարակությունները վերջին տարիներին ևս տպագրել են նմանօրինակ թարգմանություններ: Վարուժան Արզումանյանը և Պատրիկ Բարդուն 1978 թ. Մարսելում հիմնել են «Editions Parentheses» հրատարակչությունը: Գործունեության սկզբում հիմնականում տպագրել են ճարտարապետության և քաղաքաշինության վերաբերյալ գրքեր, իսկ կարճ ժամանակ անց սկսել են հրատարակել նաև տարաբնույթ գրքեր: 1979 թվականից հետո նրանք լույս են ընծայել երկու ժողովածու, որոնք ներառում են Հայաստանի պատմության, մշակույթի և գրականության վերաբերյալ ստեղծագործություններ²:

1975 թ. Արֆորվիլում հիմնադրվում է «Sigest» ընկերությունը, իսկ 2004 թ. բացվել է ընկերության հրատարակչական բաժինը, որի տնօրենն է Վարուժան Միրափյանը: Բաժնի թարգմանությամբ գրքերը տարածվում են Ֆրանսիայի և Եվրոպայի գրախանութներում: Կան այլ հրատարակչություններ, որոնք հիմնականում տպագրել են թարգմանված պատմավեպեր, ինչպես նաև 1915 թ. իրադարձությունների ականատեսների հուշերը, գրական զանազան ստեղծագործություններ: 1991 թ. ի վեր հայերենից ֆրանսերեն թարգմանված գրքերի թիվը 62 է:

АРМЯНО-ФРАНЦУЗСКАЯ ПЕРЕВОДНАЯ ЛИТЕРАТУРА ВО ФРАНЦИИ

МАРТИРОСЯН А. М.

Резюме

В силу известных трагических событий армяне обосновались в разных странах мира. Представители армянской общины во Франции пытались посредством перевода пропагандировать армянскую культуру, в частности, армянскую литературу, начиная со средневековья до наших дней, тем самым приобщая французских читателей к богатому духовному наследию армянского народа. Воистину неоценима роль французских арменоведов (Флориваль, Эд. Дюлориен, Мари Фелисте Броссет и др.) в переводе лучших образцов армянской литературы на французский язык. В настоящее время издательство «Сижест» занимается переводом и распространением армянской литературы в Европе и, в частности, во Франции.

² Խաչատրյան Հ., Հայ թարգմանական գրականությունը Ֆրանսիայում (Հայաստանի գրքերը, 2013, N 2-3 (32), էջ 119):

ARMENIAN – FRENCH TRANSLATED LITERATURE IN FRANCE

A. MARTIROSYAN

Abstract

Armenian communities were founded in many countries. It has always been the aspiration of Armenian communities to communicate with public and to create a political, social-economic and cultural heritage. Through their translations, Armenians promoted both classical and contemporary Armenian literature and introduced themselves to French readers.

In this respect, it is worth mentioning the contribution of such French Armenologists as Florival, Marie Felicite Brosset, Victor Langlois and others. At present, “Sigest” publishing house is engaged in the translation of the best samples of Armenian literature, which are later sent to the bookstores in France and other European countries.